ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ*

ՀՏԴ 347.2

Գրիգորյան Իլոնա

Հայ-Ռուսական Համալսարան, Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտ,
Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոն
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն հոդվածում հեղինակը վերլուծել է՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, հանցագործությունների կանխարգելման և հանցավոր արարքներ կատարած անձանց պատժի անխուսափելիության ապահովման ոլորտում համակարգված համալիր մոտեցման ապահովման անհրաժեշտությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ կանխարգելիչ միջոցառումներ:

Առանձնահատուկ նշանակություն ունի կազմակերպված հանցավոր խմբերի անդամների, մասնավորապես նրանց առաջնորդների հնարավորինս արագ նույնականացումը, հանցավոր խմբավորումները լուծարելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ պատժի անխուսափելիության ապահովման միջոցով, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելը և հանրային վտանգին համարժեք պատժի աստիճանի պարտադրումը: Այս դեպքում պետք է ձեռնարկվեն հետևյալ կանխարգելիչ միջոցառումները՝ կազմակերպված հանցավոր խմբերի և նրանց անդամների բացահայտում և օպերատիվ հաշվառում, նրանց կողմից հանցագործությունների կատարումը բարդացնող կամ բացառող պայմանների ստեղծում, ծրագրված հանցագործությունների կանխարգելում, կազմակերպված խմբավորումների կողմից նախապատրաստվող և կատարվող հանցագործությունների կանխում, նպատակային ազդեցություն կազմակերպված խմբերի ղեկավարների վրա՝ այլ մասնակիցների վրա իրենց ազդեցությունը չեզոքացնելու և հանցավոր խմբավորումը կազմալուծելու համար.

Խիստ կարևոր է նաև ապահովել՝ իրավապահ և գործադիր իշխանության շահագրգիռ այլ մարմինների, ինչպես նաև այլ երկրների իրավապահ մարմինների միջև կայուն համագործակցության հաստատումը, ահաբեկչության առաջացմանը, տարածմանը և զարգացմանը նպաստող գործոնների ժամանակին հայտնաբերումը, դրանց վերացումը, հանցավորության բացահայտելիության մակարդակի բարձրացումը, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման համար իրավապահ մարմինների ծառայողների պատասխանատվության բարձրացումը, թմրաբիզնեսի, ինչպես նաև կիբեռհանցագործությունների դեմ տարվող պայքարի հետագա ուժեղացումը:

* Հոդվածը ներկայացվել է 9.07.2022:
Տպագրության է երաշխավորել, ի.գ.դ. պրոֆեսոր Ս. Ծաղիկյանը:15.07.2022
Հոդվածը տպագրության է ընդունվել 26.07.2022:

Բանալի բառեր՝ հանցավոր կազմակերպություն, ենթամշակույթ, կանխարգելում, կոռուպցիա, փողերի լվացում, հանցավոր գործունեություն, հակազդում, օրենսդրություն, պատիժ, միջոցառումներ, ազդեցություն, անվտանգություն, պետական մարմիններ, խնդիրներ, մեթոդներ:

Ներածություն

Կազմակերպված հանցավորության դեմ առավել արդյունավետ հակազդեցություն ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել ՀՀ-ում ձեռնարկված տարաբնույթ բնույթի միջոցառումների կատարելագործմանն ուղղված գործունեությունը: Դրանց շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում քրեագիտական բնույթի միջոցառումները: Կազմակերպված հանցավորության հակազդմանն ուղղված քրեագիտական բնույթի միջոցառումները նախատեսում են կազմակերպված հանցավորության աճի վրա ազդող քրեածին գործոնների թուլացմանն ու չեզոքացմանը ուղղված իրավասու մարմինների կողմից աշխատանքների իրականացում:

Կազմակերպված հանցավորությունը խիստ բացասական ազդեցություն է թողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա, խախտելով ՀՀ սոցիալական և տնտեսական ինստիտուտների կանոնավոր գործունեությունը, այն իրենից ներկայացնում է ժամանակակից հասարակության առավել բարդ և նեգատիվ հիմնախնդիր, ավելին՝ կազմակերպված հանցավորությունը հանդիսանում է պետական անվտանգության իրական սպառնալիք: Վերջին տարիների պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ կազմակերպված հանցավոր խմբավորումները իրենց գործունեության թիրախում ընտրում են հատկապես երկրի տնտեսական բնագավառները, ընդ որում տիրապետելով ֆինանսական միջոցների և լծակների, օգտագործում են պետական մարմինների կոռումպացված պաշտոնատար անձանց: Հայաստանում օրինականության հաստատման, տնտեսական բերելքի ապահովման միջոցով քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման հրամայական պահանջի պայմաններում, քաղաքական և տնտեսական շրջադարձային ծրագրերի իրականացման գործում, որոշիչ նշանակություն է ստանում կազմակերպված հանցավորության կանխարգելման խնդիրները: Քանզի հանցավոր խմբավորումները հարմարվում են և փոփոխվում ըստ այն պայմանների, որում իրականացվում են իրենց գործունեությունը, այսինքն դրանք ընդունակ են ինքնադետերմինացնել սոցիալական միջավայրը իրենց շահերին: Խնդիրը նաև նրանում է, որ կազմակերպված ոմբերի հանցավոր գործունեությունը, հատկապես տնտեսական ոլորտում խիստ քողարկված է, ուստի հանցագործությունների մի ստվար հատվածը մնում է չբացահայտված, որի հետևանքով նրանց գործունեությունը տնողական և արհեստավար բնույթ է կրում: Անգամ Հայաստանում կազմակերպված հանցավորության կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված որաշակի միջոցառումների պայմաններում 1920-1921 թթ. կատարված հանցագործությունների ընդհանուր թվում 424 կամ 0,7% կատարվել են հանցավոր խմբերի կողմից: Նշված իրավիճակում խստագույնս կարևորվում է կազմակերպված հանցավորությունը ծնող պատճառների և պայմանների վերացման հիմնախնդիրը, որի արդյունավերությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է պետական համալիր ծրագրերի իրականացում:

Մեթոդներ

Հիմնված է գիտական ճանաչողության դիալեկտիկ մեթոդի վրա, ինչպես նաև հեղինակն օգտագործել է համեմատությունում, վերլուծություն, համադրում, նկարագրում:

Քննարկում

Հաշվի առնելով կազմակերպված հանցավորության՝ օրինական բիզնես մուտք գործելու և ապօրինի ձեռք բերված միջոցների լվացման համար առևտրային կազմակերպություններին օգտագործելու վերը նշված միտումը, իրավասու մարմինները պետք է ուժեղացնեն վերահսկողությունը ձեռնարկությունների և առևտրային կազմակերպությունների ստեղծման օրինականության, ինչպես նաև՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ, վերացնեն մենաշնորհային և հակամրցակցային գործունեության հնարավորությունները, կանխեն հանցավորության մուտքն օրինական բիզնես:

Անհրաժեշտ է նաև ձեռնարկել միջոցներ հարկադրման համակարգի կատարելագործման և ստվերային ապրանքաշրջանառության ծավալների նվազման ուղղությամբ: Նման միջոցները հնարավորություն կընձեռեն քայքայել կազմակերպված հանցավորությանն նյութաֆինանսական հիմքը՝ օրինական բիզնեսներից դրա ներկայացուցիչներին դուրս մղելու և անօրինական ճանապարհով ձեռք բերված միջոցների լվացման հնարավորությունից զրկելու միջոցով:

Արդյունքում՝ ձեռնարկված միջոցները պետք է նվազեցնեն ապօրինի գործողությունների եկամտաբերությունը՝ դարձնելով այն ավելի քիչ գրավիչ կազմակերպված հանցավորության համար:

Անհրաժեշտ է նաև ձեռնարկել միջոցներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների և հոգեմետ դեղերի ապօրինի շրջանառության, ինչպես նաև՝ դրանք պետական սահմանով ներմուծման/արտահանման փորձերի կանխարգելմանը:

Ոչ պակաս կարևոր է նպատակաուղղված աշխատանքներ իրականացնել հասարակական կարգավորող մարմինների դերի բարձրացման, հանցավոր գործունեության նկատմամբ անթույլատրելիության և անհանդուրժողականության քարոզչության, իրավական նիհիլիզմի (ժխտողականության) վերացման և իրավապահ մարմինների նկատմամբ հասարակության վստահության վերականգնման ուղղությամբ:

Վերջին ժամանակահատվածում Հայաստանում կազմակերպված հանցավորության բնորոշ առանձնահատկությունն է նախկինում դատապարտված անձանց աճող դերը կազմակերպված հանցագործությունների կատարման գործում, ավելին՝ դրանց կատարման նախապատրաստման և կազմակերպման մասով: Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն, 2001 թվականից մինչև 2007 թվականը ՀՀ-ում, միջին հաշվով, նախկինում դատապարտված անձանց մասնակցությամբ խմբային հանցագործությունների 11.3% -ը կրում էր կազմակերպված բնույթ[1]:

1990-ականների սկզբից սկսած՝ երիտասարդության շրջանում նկատվում է հանցավոր ենթամշակույթի զգալի տարածում, ինչը նույնպես հանդիսանում էր հանցավոր

[1] Сведения о рецидивных преступлениях в РА за 2001-2007гг.//ИЦ Полиции РА, Ереван 2008.

վարքի ձևավորման և քրեական ուղղվածության հակահասարակական խմբերի առաջացման քրեածին գործոններից[1]: Տեսաբանների կարծիքի հետ համամիտ են նաև իրավապահները: Ուսումնասիրության շրջանակներում հարցված ոստիկանության Երևան քաղաքի վարչության աշխատակիցների 68% -ը հատուկ մտահոգություն է հայտնել երիտասարդության շրջանում այս երևույթի տարածման և այս առումով հնարավոր բացասական միտումների վերաբերյալ: Այս կարծիքը հաստատվում է նաև վիճակագրությամբ:

Անցկացված ուսումնասիրություններից պարզվել է, որ տարիներ շարունակ անչափահասների կողմից կատարված հանցագործությունները (ներառյալ խմբերի կազմում) զգալի, անփոփոխ բնույթ են կրում, այդ թվում՝ մեկ երրորդը հանցավոր խմբերի կազմում[2]:

Պետք է խոստովանենք, որ այսօր Հայաստանում կազմակերպված հանցավորության հակազդման ոլորտում դեռևս առկա են թերություններ: Չնայած վերջին շրջանում այս ոլորտում իրավապահ մարմինների միջև փոխգործակցության մակարդակն աճել է, այդ ուղղությամբ դեռևս անհրաժեշտ է իրականացնել ակտիվ աշխատանքներ: Անհրաժեշտ է բարձրացնել՝ կազմակերպված հանցավոր խմբերի և համագործակցությունների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման, հավաքման և վերլուծության, անհրաժեշտության դեպքում, դրանց կառուցվածքներ օպերատիվ-հետախուզական ներթափանցման, հակազդման միջոցների մշակման և հանցավոր ճանապարհով ձեռք բերված փողերի լվացման կանխմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

Առանձնահատուկ նշանակություն ունի կազմակերպված հանցավոր խմբերի անդամների, մասնավորապես՝ նրանց առաջնորդների հնարավորինս արագ նույնականացումը, հանցավոր խմբավորումները լուծարելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ պատժի անխուսափելիության ապահովման միջոցով, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելը և հանրային վտանգին համարժեք պատժի աստիճանի պարտադրումը: Այս դեպքում պետք է ձեռնարկվեն հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

- կազմակերպված հանցավոր խմբերի և նրանց անդամների բացահայտում և օպերատիվ հաշվառում,
- նրանց կողմից հանցագործությունների կատարումը բարդացնող կամ բացառող պայմանների ստեղծում,
- ծրագրված հանցագործությունների կանխարգելում,
- կազմակերպված խմբավորումների կողմից նախապատրաստվող և կատարվող հանցագործությունների կանխում,

[1] См. Симонян Т.В. Преступная субкультура молодежи в Республике Армения// Российский следователь. М.,2007, № 19. Стр.35, Габузян А.А Проблемы преступности в Республике Армения. Ереван,2007, стр.74:

[2] См. Доклад Начальника Полиции РА А.Саргсяна на коллегии Полиции РА. Режим доступа: URL: www.police.am (дата доступа-29.09.2011).

- նպատակային ազդեցություն կազմակերպված խմբերի ղեկավարների վրա՝ այլ մասնակիցների վրա իրենց ազդեցությունը չեզոքացնելու և հանցավոր խմբավորումը կազմալուծելու համար,

- իրավապահ մարմինների և վերահսկող գերատեսչությունների աշխատակիցներից ստեղծված և երկարաժամկետ հիմունքներով գործող խմբերի կողմից կազմակերպված հանցավորության դեմ պայքարի նպատակային համալիր ծրագրերի իրականացում[1]:

Մեր ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այսօրվա դրությամբ, տվյալ կողմին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել կազմակերպված հանցավորության վերաբերյալ վիճակագրական հաշվառումների և ցուցիչների համակարգը ինչպես՝ իրավապահ մարմիններում, այնպես էլ՝ դատարաններում: Նման տեղեկատվական և վերլուծական գործունեության մակարդակի բարձրացումը կնպաստի քրեագիտական կանխատեսումների բարելավմանը, նշված շտեմարանների թարմացմանը և կազմակերպված հանցավոր խմբավորումների պարագլուխների և անդամների նկատմամբ օպերատիվ-հետախուզական և կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքում ստացված տվյալների օգտագործմանը: Նման վերլուծությունն անհրաժեշտ է կազմակերպված հանցավորության ընթացիկ իրավիճակը պատշաճ գնահատելու և հնարավոր միտումները բացահայտելու համար: Դրա համար առաջարկվում է իրականացնել հանցավոր միջոցների աղբյուր հանդիսացող հանցագործությունների ռիսկերի ռազմավարական վերլուծություն՝ կազմակերպված հանցավորության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հատուկ կանխարգելման միջոցառումների շարքում առանցքային նշանակություն ունեն այն միջոցառումները, որոնք ուղղված են կազմակերպված հանցավոր խմբավորումների կազմում հանցանք գործած անձանց ուղղմանը, ինչպես նաև՝ վերջիններիս սոցիալական վերականգնման (ռեաբիլիտացիայի) և պատիժը կրելուց հետո նրանց վարքագծի նկատմամբ հսկողությանը:

Ավաղ, Հայաստանի Հանրապետությունում չի գործում դատապարտյալների սոցիալական վերականգնման արդյունավետ համակարգ, հետևաբար, սահմանափակվում է նախկինում դատապարտվածների շրջանում ռեցիդիվի կանխարգելման հնարավորությունը: Այս եզրակացությունը հաստատվում է կազմակերպված հանցավոր խմբավորումների կողմից կատարված հանցագործություններում նախկինում դատապարտվածների մասնակցության աստիճանի վերաբերյալ վիճակագրական տվյալներով: Այսպես, վերջին երկու տասնամյակներում հանցագործությունների թվում 11.3%-ը կրում են կազմակերպված բնույթ: Այս վիճակագրությունը խոսում է հօգուտ այն եզրակացության, որ քրեական պատժի նպատակները չեն իրականացվել՝ դատապարտվածի ուղղում և վերջինիս կողմից նոր հանցագործությունների կանխարգելում: Չնայած քրեակատարողական համակարգում ընթացող բարեփոխումներին, բանտարկյալների կալանավորման պայմանների բարելավմանը՝ ազատազրկման տեսքով պատիժը կրելու պրակտիկան փաստացի որևէ փոփոխության չի ենթարկվել:

[1] Криминология: Учебник для вузов/под ред.В.Д. Малкова. С.422-424.

Բացի այդ, գործնականում բանտարկյալների հետ չի տարվում որևէ դաստիարակչական աշխատանք, չի ապահովվում վերջիններիս զբաղվածությունը (աշխատանքային, մշակութային, կրթական): Ստեղծված վիճակը հնարավորություն է թողնում՝ հանցավոր աշխարհի առաջնորդների ազդեցության տակ ընկնելու, քրեական ենթամշակույթի հետևորդ դառնալու, այդ ենթամշակույթի ավանդույթների և վարքագծի նորմերի հետևորդ դառնալու համար: Այդ առումով որաշակի կանխարգելիչ նշանակություն կարող է ունենալ ՀՀ նոր քրեական օրենսգրքում քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ատեղծելու և ղեկավարելու, դրանում մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու վերաբերյալ քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի առկայությունը (ՀՀ քր. օր-ի 323-325 հհ.) Խիստ կարևոր ենք համարում ՀՀ տարածքում իրենց պատիժը կրող անձանց սոցիալական ռեաբիլիտացիայի ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պատիժը կրելու ընթացքում բանտարկյալների հարկադիր զբաղվածության ծրագրերի ներդրման ուղղությամբ, հնարավորության դեպքում՝ նաև պատիժը կրելուց հետո: Կալանավայրից ազատ արձակվելուց հետո աշխատանքի տեղավորման հնարավորության բացակայությունը մեծացնում է դատապարտյալի հանցավոր գործունեությանը վերադառնալու հավանականությունը: Հարկ է նշել նաև, որ պատիժը կրած դատապարտյալների նկատմամբ կանխարգելումը չի կարող արդյունավետ լինել, եթե հաստատված չէ և չի ապահովվում քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության տարածքային բաժինների միջև տեղեկատվության անխափան փոխանակումը: Ինչպես վկայում է փորձը, ազատման մասին ծանուցումները ժամանակին չեն հասնում ոստիկանության տարածքային մարմիններին, որոշ դեպքերում՝ չեն ուղարկվում ընդհանրապես, հետևաբար, կալանավայրից ազատ արձակված դատապարտյալը չի կանգնում հաշվառման և վերջինիս հետ չի իրականացվում կանխարգելիչ աշխատանք:

Ուշագրավ է այլ պետությունների փորձը, ըստ որի՝ հանցավոր կազմակերպությունների կողմից ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավումը՝ որպես պատժամիջոց, կազմակերպված հանցավորության դեմ պայքարում բավականին արդյունավետ կանխարգելիչ միջոց է: Դատարաններում պատժի նշանակումը տեսակների գրագետ համադրմամբ, ավելի կոնկրետ՝ ազատազրկումը և հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավումը, թույլ կտա խարխլել հանցավոր խմբավորման ֆինանսական հիմքը և կզրկի հանցավոր ճանապարհով հարստանալու հնարավորությունից: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսդրությունն անգամ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար որպես լրացուցիչ պատժատեսակ չի նախատեսում գույքի բռնագրավումը, կարծում ենք վերը նշվածը օրենսդրական կարգավորման խնդիր ունի:

Հայտնի է, կազմակերպված խմբի կողմից հանցագործության կատարումը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված բազմաթիվ հանցագործությունների հանցակազմերի համար արարքը առավելապես ծանրացնող հանգամանք: Այնուամենայնիվ, դատարանները կազմակերպված հանցավոր խմբերի անդամների նկատմամբ երբեմն նշանակում են ավելի մեղմ պատիժներ, քան նախատեսված է օրենքով, այդպիսիք հնարավորություն են ստեղծում կազմակերպված հանցավոր խմբերի անդամների

նկատմամբ կիրառել պայմանական վաղաժամկետ ազատում կամ չկրած պատժի մի մասը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով, ինչը նաև թուլացնում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարը և չի ստեղծում պատժի անխուսափելիության զգացում:

Հնարավորինս պետք է նաև բացառել կազմակերպված խմբերի կողմից կատարված հանցագործությունների համար համաներման կիրառումը, քանի որ մի շարք դեպքեր են արձանագրվել, որ նրանք, պատժի կրումից ազատվելով, շարունակել են հանցավոր գործունեությունը:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում բավականին բարձր է իրավական ժխտողականությունը (նիհիլիզմը) և իրավապահ մարմինների հանդեպ անվստահությունը: Սոցիոլոգիական հարցման արդյունքների համաձայն՝ հարցված ՀՀ քաղաքացիների 67.6%-ն անվստահություն է հայտնել ոստիկանության, 61.5%-ը՝ դատախազությանը և 62.5% -ը՝ դատարանների նկատմամբ, միևնույն ժամանակ, հարցվածների 81.8%-ը չի վստահում հարկային մարմիններին[1]: Իրավապահ մարմինների նկատմամբ անվստահության պատճառով տուժածների մի մասը չի դիմում իրավապահ մարմիններին, հետևաբար, այդ հանցագործությունները մնում են չհաշվառված: Գոյություն ունի նաև վկաներին և տուժողներին վախեցնելու պրակտիկա, վերջիններս ստիպված են փոխել իրենց ցուցմունքները և հրաժարվել առաջադրված մեղադրանքներից քննության ընթացքում կամ դատարանում: Այս փաստը բացասաբար է անդրադառնում հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների աշխատանքի վրա: Հաշվի առնելով այն երաշխիքները, որոնք պարունակում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, պետք է նաև ձեռնարկվեն քայլեր քննության և արդարադատության մարմիններին օժանդակող անձանց պաշտպանությունն ապահովող ստորաբաժանման ստեղծման ուղղությամբ: Այս կատեգորիայի անձինք են հանդիսանում ոչ միայն վկաները, այլև՝ կազմակերպված հանցավոր խմբի անդամները, ովքեր կարող են ցանկություն հայտնել համագործակցել հետաքննող մարմինների հետ: Այս գործունեությունը կարևոր է իրավապահ մարմինների նկատմամբ առկա անվստահության և հետաքննությանը նրանց օգնություն ցուցաբերելու ՀՀ քաղաքացիների չցանկանալու տեսակետից, ինչից և օգտվում են հանցավոր աշխարհի ներկայացուցիչները՝ դիմելով վկաների և տուժածների ահաբեկմանը: Վերջիններս չեն հավատում իրավապահ մարմինների ունակությանը և նույնիսկ ցանկությանը՝ իրենց հանցավոր աշխարհի ներկայացուցիչների ոտնձգություններից պաշտպանելու հարցում:

Ակնհայտ է, որ տեխնոլոգիաների զարգացման, գլոբալիզացիայի և նոր սպառնալիքների տարածման պայմաններում կազմակերպված հանցավորությունը զարգանում և դառնում է առավել վտանգավոր: Կազմակերպված հանցավորությունը ներթափանցում է սոցիալական կյանքի նոր ոլորտներ՝ օգտագործելով աշխատանքի ավելի բարդ և վտանգավոր մեթոդներ, ձեռք բերելով անդրազգային բնույթ: Այս ամենը զգալիորեն բարդացնում է իրավապահ մարմինների աշխատանքը հանցագործությունների հետաքննության և կանխարգելման ոլորտում: Թույլ նյութատեխնիկական բազան, հատկապես՝ Հայաստանի մարզերում, նաև դժվարություններ է ստեղծում կազմակերպված

[1] Габузян А.А Проблемы преступности в Республике Армения. стр 188.

հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում: Ինչպես արդեն նշվեց, կազմակերպված հանցավորությանը բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ, կազմակերպված հանցավոր խմբի անդամների կողմից կատարված հանցագործությունների քննությունը տարբերվում է սովորական հանցագործությունների քննությունից: Նման հանցագործությունների քննությունը հաճախ պահանջում է իրականացնել երկարատև աշխատանք՝ հանցավոր խմբի (համագործակցության) բոլոր անդամներին բացահայտելու, խմբում դրանց գործառույթներն ու դերերը սահմանելու, ինքնին խմբի կառուցվածքը պարզելու, գործունեության շրջանակը և կոռուպցիոն կապերը պարզելու ուղղությամբ: Կազմակերպված հանցավորության և իշխանությունների միջև սերտ կապն այս խնդիրը շատ ավելի բարդացնում է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ եղավ մշակել նոր քննչական մեթոդիկա և տեխնիկա, որոնք թույլ կտան հուսալի տեղեկատվություն ստանալ հանցավոր խմբերի գործունեության, կատարված կամ պլանավորված հանցավոր գործողությունների վերաբերյալ: Օրինակ՝ Եվրախորհուրդն առաջարկել է օրենսդրորեն ամրագրել հատուկ մեթոդներ օգտագործելու իրավունքը, ինչպիսիք են թաքնված գործակալները, թաքնված տեսախցիկով նկարահանումները, էլեկտրոնային հասցեները վերահսկելը և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են կազմակերպված հանցավոր խմբերի կողմից կատարված հանցագործությունների արդյունավետ հետաքննության և քրեական պատասխանատվության ենթարկելու համար[1]:

Հարկ եմ գտնում անդրադառնալ էլեկտրոնային հսկողությանը՝ որպես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հատուկ միջոց: Այն համարվում է ամենաարդյունավետը թմրանյութերի ապօրինի շրջանառության, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության այլ դրսևորումների դեպքերի քննության ընթացքում: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս ձեռք բերել հուսալի ապացույցներ մի խումբ անձանց անօրինական գործունեության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց վերևում, գործնականում այս մեթոդի ներդրումը և տարածումը կարող է հանգեցնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների ոտնահարման: Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային հսկողության չարաշահման հավանական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել այս մեթոդի օգտագործման պայմանները, այն իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները, ինչպես նաև դրա կիրառման նկատմամբ դատարանի կողմից լուրջ վերահսկողություն սահմանումը: Որպես օրինակ, ես կցանկանայի մեջբերել ԱՄՆ փորձը: Օրինակ՝ 1968թ. ԱՄՆ Դաշնային Օրենքը էլեկտրոնային հսկողության մասին պարունակում է մի շարք երաշխիքներ, որոնք նախատեսված են այս մեթոդի չարաշահման ռիսկը նվազեցնելուն: Դրանց թվում են՝

– օրենքը պետք է կիրառվի միայն որպես ծայրագույն հետաքննչական միջոց,

– այն անձինք, ովքեր իրենց աշխատանքում օգտագործում են էլեկտրոնային հսկողություն, պետք է գտնվեն խիստ վերահսկողության ներքո,

– վերահսկողները պետք է հաշվետու լինեն պատկան մարմիններին,

[1] Рекомендация Комитета Министров СЕ 2005(10) ‘Об использовании специальных средств при расследовании серьезных преступлений, включая акты терроризма.’

– էլեկտրոնային հսկողության մեթոդները պետք է համապատասխանեն ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից տրված ուղեցույցներին,

– սույն օրենքի կիրառման կարգը խախտելու համար պատժամիջոցները պետք է կիրառվեն ճշգրիտ և անհապաղ:

Այս առումով մենք անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել էլեկտրոնային հսկողություն կիրառող այլ պետությունների փորձը՝ նախքան այս տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառման կիրառումը: Այս ոլորտում գոյություն ունեցող պրակտիկան ամփոփված է ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության գործակալության նոր՝ «էլեկտրոնային հսկողության կիրառման ժամանակակից փորձը լուրջ հանցագործությունների քննության, ինչպես նաև կազմակերպված հանցագործության միջոցով կատարված հանցագործությունների մասին զեկույցում:

Ինչ վերաբերում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ապա այն նախատեսում է որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ. իրականում գոյություն չունեցող կազմակերպությունների ստեղծում, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների պատրաստած քողարկող փաստաթղթերի օգտագործում, հսկիչ գնում (ոստիկանությունն ու ԱԱԾ-ն իրավունք չունեն իրականացնել այս միջոցառումը) վերահսկելի մատակարարում և գնում, ներքին դիտում, արտաքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ ներդրում, օպերատիվ փորձարարություն, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում և այլ: Այն նաև ընդլայնում է օպերատիվ ստորաբաժանումների և օպերատիվ-հետախուզական մարմինների հետ համագործակցող անձանց իրավական և սոցիալական պաշտպանությունը:

Ինչպես նշվել է, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմինների կողմից որոշակի քայլեր են ձեռնարկում կազմակերպված հանցավորությանը հակազդելու համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է բարձրացնել ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը, մասնավորապես՝ բարձրացնել համապատասխան լիազոր մարմինների (ոստիկանություն, ազգային անվտանգություն, դատախազություն և այլն) համագործակցության, նրանց միջև տեղեկատվություն փոխանակման և ստացված տեղեկատվությանը արձագանքման ուղղությամբ ժամանակին քայլերի ձեռնարկման մակարդակը: Սա հատկապես ճիշտ է այնպիսի հանցագործությունների հետաքննության դեպքում, ինչպիսիք են սպանությունը, կողոպուտը, բանդիտիզմը, ահաբեկչությունը, թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառությունը, տնտեսական հանցագործությունները և այլն: Տեղեկատվություն հավաքելու և մշակելու համար շատ արդյունավետ կարող է լինել տարբեր մարմինների մի քանի տվյալների շտեմարանների համատեղումը: Դրանց թվին են պատկանում ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի տվյալների շտեմարանները: Տվյալների համախմբումը լիազորված մարմինների/անձանց մուտքի հստակ սահմանմամբ կապահովի կոնկրետ անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին ստուգումն ու վերլուծությունը՝ հանցավոր արարքների, այդ թվում՝ կազմակերպված հանցավոր խմբերի կազմում, կանխարգելման նպատակով: Սա առանձ-

նահատուկ նշանակություն կունենա փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում և այլն:

Եզրակացություն

Այնուամենայնիվ, առանց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հստակ հայեցակարգի մշակման, որը համապատասխանում է ժամանակակից իրողություններին՝ խնդիրների և նպատակների սահմանմամբ, ցանկացած այլ քրեագիտական միջոցներ անբավարար կլինեն: Այս կապակցությամբ պետք է անդրադառնալ Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործող ազգային ծրագրին: Այս ծրագիրը ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարության բաղկացուցիչ մասն է: Սույն փաստաթուղթը նպատակաուղղված է կազմակերպված հանցավորության և նրա տարածման խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը, որոնք իրենց հերթին կնպաստեն ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության լիարժեք կայացմանը: Հայաստանի Հանրապետությունում ընդունված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ծրագրի հիմնական խնդիրներից է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացումը: Ծրագրի շրջանակներում առաջադրված առաջնահերթությունները՝

– իրավապահ և գործադիր իշխանության շահագրգիռ այլ մարմինների, ինչպես նաև այլ երկրների իրավապահ մարմինների միջև կայուն համագործակցության հաստատումը,

– ահաբեկչության առաջացմանը, տարածմանը և զարգացմանը նպաստող գործոնների ժամանակին հայտնաբերումը, դրանց վերացումը/չեզոքացումը,

– հանցավորության բացահայտելիության մակարդակի բարձրացումը, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման համար իրավապահ մարմինների ծառայողների պատասխանատվության բարձրացումը,

– թմրաբիզնեսի, ինչպես նաև կիբեռհանցագործությունների դեմ տարվող պայքարի հետագա ուժեղացումը.

– իրավապահ մարմինների՝ միջազգային չափանիշներին համապատասխանող նյութատեխնիկական բազայի ամրապնդումը,

– իրավապահ մարմինների արհեստավարժ կադրերի արտահոսքի կանխումը, աշխատակիցների որակավորման և պատրաստականության բարձրացումը,

– իրավապահ համակարգի և նրա գործունեության արդյունքների վերաբերյալ դրական հասարակական կարծիքի ձևավորումը, պետական կառույցների նկատմամբ հասարակության վստահության վերականգնումը:

– կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրավական դաշտի կատարելագործումը, ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը ոլորտին վերաբերող՝ վավերացված միջազգային պայմանագրերին,

– «Ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու և շահագործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը,

– անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրությունը,

– կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության գործերով զբաղվող հատուկ դատարանի ձևավորման արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրումը,

– օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման առանձին մեթոդների կիրառման մասին գերատեսչական իրավական ակտերի ընդունումը,

– կիբեռհանցագործությունների դեմ պայքարում համացանց և կապի ծառայություններ մատուցող օպերատորների և իրավապահ մարմինների միջև փոխհամագործակցության կանոնակարգմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի մշակումը և այլն:

Հաշվի առնելով, որ կազմակերպված հանցավորությունը կապված է կոռուպցիայի հետ և որոշակի հանրային վտանգ է պարունակում, ձեռք է բերում ավելի բարդ և ցինիկ բնույթ, խարխլում է իշխանությունների հեղինակությունը, խոչընդոտում է տնտեսական վերափոխումների գործընթացին, Հայաստանը ակտիվ քայլեր է ձեռնարկում՝ միանալու բոլոր հիմնարար միջազգային իրավական ակտերին, մի շարք նորմերի Հայաստանի իրավական համակարգ ներդրման նպատակով:

Կարևոր է հանցագործությունների սոցիալական կանխարգելման համակարգի ձևավորումը, բոլոր պետական մարմինների և հասարակության ներգրավումը այդ գործընթացներին, հանցավորության դեմ պայքարում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացումը, տնտեսական ոլորտում քրեածին տարրերին հակազդելու միջոցառումների ստեղծումը, կատարված հանցագործությունների համար պատժի անխուսափելիության ապահովումը, հասարակության շրջանում այդպիսի հանցագործությունների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորումը, հասարակության մեջ հանցավորության իրավիճակի վերահսկումը, կազմակերպված հանցավորության ֆինանսատնտեսական բազայի ոչնչացումը՝ այս երևույթի դեմ պայքարի իրական, արդյունավետ մեթոդների կիրառումը, քրեական եկամտի աղբյուրների բացահայտումը և արգելափակումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Симонян Т.В. Преступная субкультура молодежи в Республике Армения // Российский следователь. М., 2007, №19. С.35; Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения. Ереван, 2007. С. 74
2. Криминология: Учебник для вузов / под ред. В.Д. Малкова. С. 422-424
3. Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения. С.188
4. Сведения о рецидивных преступлениях в РА за 2001-2007 гг. // ИЦ Полиции РА. Ереван, 2008
5. Доклад Начальника Полиции РА А.Саргсяна на коллегии Полиции РА. Режим доступа: URL:www.police.am (дата доступа – 29.09.2011)
6. Рекомендация Комитета Министров СЕ 2005(10) «Об использовании специальных средств при расследовании серьезных преступлений, включая акты терроризма».
7. The Federal electronic surveillance statutes codified at 18 U.S.C. § 2510. Режим доступа: URL:

http://www.justice.gov/usao/eousa/foia_reading_room/usam/title9/7mcrm.htm (дата доступа - 10.11.2011).
8. Current Practices in Electronic Surveillance in the Investigation of Serious and Organized Crime. United Nations publication, Sales No. E.09.XI.19.
9. Закон Республики Армения ՀՕ-223-Ն от 22 октября 2007 года «Об оперативно-розыскной деятельности мероприятиях». Ст. 10.
10. Решение Правительства РА 2012 г. N -Ն (Проект). Об утверждении графика мероприятий, предусмотренных Национальной Программой по повышению эффективности противодействия организованной преступности в 2012-2013 гг. в Республике Армения. График мероприятий, предусмотренных Национальной Программой по повышению эффективности противодействия организованной преступности в 2012-2013 гг. в Республике Армения. Режим доступа:www.police.am. (дата доступа – 01.02.2012).

REFERENCES

1. Simonyan T.V. Prestupnaya subkultura molodeji v Respublike Armeniya // Rossiyskiy sledovatel. M., 2007, N 19. S. 35; Gabuzyan A.A. Problemi prestupnosti v Respublike Armeniya. Erevan, 2007. S. 74 (In Russian.)
2. Kriminologiya: Uchebnik dlya vuzov/ pod red. V.D. Malkova. S. 422-424 (In Russian)
3. Gabuzyan A.A. Problemi prestupnosti v Respublike Armeniya. S. 188 (In Russian)
4. Svedeniya o retsidivnix prestupleniyax v RA za 2001-2007gg.// ITS Policii RA. Erevan, 2008 (In Russian)
5. Doklad Nachalnika Policii RA A. Sargsyana na kollegii Policii RA. Rejim dostupa: URL: www.police.am (data dostupa – 29.09.2011) (In Russian)
6. Rekomendaciya Komiteta Ministrov SE2005(10) «Ob ispolzovanii specialnix sredstv pri rassledovanii sereznix prestupleniy, vkluchaya akti terrorizma», (In Russian)
7. The Federal electronic surveillance statutes codified at 18 U.S.C. § 2510. Режим доступа: URL: http://www.justice.gov/usao/eousa/foia_reading_room/usam/title9/7mcrm.htm (дата доступа - 10.11.2011). (In Eng.)
8. Current Practices in Electronic Surveillance in the Investigation of Serious and Organized Crime. United Nations publication, Sales No. E.09.XI.19. (In Eng.)
9. Zakon Respubliki Armeniya HO-223 –N ot 22 oktyabrya 2007 goda «Ob operativno-rozisknoy deyatelnosti meropriyatiyax». St. 10 (In Russian)
10. Reshenie Pravitelstva RA 2012g. N- N (Proekt). Ob utverjdenii grafika meropriyatiy, predusmotrennix Natsionalnoy Programmoy po povisheniyu effektivnosti protivodeystviya organizovannoy prestupnpsti v 2012-2013gg. v Resbuplike Armeniya. Grafik meropriyatiy, predusmotrennix Natsionalnoy Programmoy po povisheniyu effektivnosti protivodeystviya organizovannoy prestupnpsti v 2012-2013gg v Respublike Armeniya. Rejim dostupa: www.police.am. (data dostupa – 01.02.2012). (In Russian).

РЕЗЮМЕ

Совершенствование криминалистических мер по борьбе с организованной преступностью

Илона Григорян

Российско-Армянский Университет, Институт права и политологии,
Кафедра уголовного права и уголовного судопроизводства Соискатель
Ереван, Республика Армения

В настоящей статье автор проанализировал основные направления борьбы с организованной преступностью, пресечение и предупреждение преступных действий, обеспечение неотвратимости наказания в отношении лиц, совершивших преступление, о необходимости обеспечения системного подхода. Для этого необходимо предпринять следующие предупредительные меры: выявление и постановка на оперативный учет организованных преступных формирований и их участников, создание условий, затрудняющих или исключающих совершение ими преступлений, предотвращение замышляемых преступлений, пресечение подготавливаемых и совершаемых организованными формированиями преступлений, целенаправленное воздействие на лидеров организованных групп с целью нейтрализации их влияния на других участников и разобщения преступного формирования.

Очень важно также обеспечение более тесного сотрудничества как между национальными правоохранительными органами, так и с соответствующими органами других государств и международных организаций, своевременное выявление факторов, способствующих появлению, распространению и развитию терроризма, их уничтожение, повышение уровня раскрываемости преступлений, особенно тяжких и особо тяжких, с предусмотрением ответственности соответствующих сотрудников за уровень раскрываемости, lальнейшее усиление борьбы против наркобизнеса и преступлений, совершаемых в киберпространстве.

Ключевые слова: преступная организация, субкультура, профилактика, корупция, отмывание денег, противодействие, законодательство, наказание, мероприятия, влияние, безопасность, государственные органы, задачи, методы

SUMMARY

Recommendations on Forensic Issues in the Fight against Organized Crime

Ilona Grigoryan

Russian-Armenian University Institute of Law and Political Science
Chair of Criminal Law and Criminal Proceedings Ph.D.Student
Yerevan, Armenia

In this article the author analyzes key directions of the fight against organized crime, crime prevention, the inevitability of punishment for the perpetrators of criminal acts, the need to ensure a comprehensive approach to the field under scrutiny.

Of particular importance is the quickest identification of members of organized criminal groups, particularly their leaders, the implementation of operative-investigative measures aimed at elimination of criminal groups, including through ensuring the inevitability of punishment, bringing their members to criminal liability and imposing a degree of punishment corresponding to

the public danger. In such cases, the following preventive measures should be taken: identification and registration of organized criminal groups and their members, creation of conditions that make it hard or impossible to continue criminal activity, prevention of planned and ongoing crimes, targeted influence on the leaders of organized groups to neutralize their leverage on other participants and to break up the criminal group.

It is also very important to ensure the establishment of stable cooperation between other relevant the law enforcement agencies, both national and foreign, as well as the timely detection of factors contributing to the emergence, spread and development of terrorism, its elimination, increasing the level of detectability of crimes, increased responsibility of the law enforcement officers for solving serious and particularly serious crimes, further strengthening of the fight against drug trade, as well as cybercrimes.

Keywords: criminal organization, subculture, prevention, corruption, money-laundering, counteraction, legislation, punishment, measures, influence, security, state bodies, tasks, methods of corruption,